Հ Ր Ա Մ Ա Ն N 561-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 348-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 348-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Հավելվածի՝

ա. 28-րդ կետի 14-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

բ. 29-րդ կետի 3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով,

գ. 29-րդ կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել 4-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) կենտրոնական մարմնի կենցաղային ապահովման բաժինը:»:

11/16/2021

X

Karen Andreasyan

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ